

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Ո՞վ է կարողանում գրավել երիտասարդությանը.. 1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք2
- 3- Լուրեր – Հայաստա.....3
- 4- Լուրեր – Իրան6
- 5- Լուրեր– Սփյուռք.....6
- 6- Հասարակական.....7
- 7- Մշակույթ.....8
- 8- Մարզանք.....10

Սյունակների տղոջան պատճարով
 Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում
 եւ Հայ հին գրականություն հոդվածների շարունակությունը
 կտպագրվի հաջորդ համարում

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2

Ծափկի առաջին էջում՝

Չավախք

Ծափկի վերջին էջում՝

Չավախք՝ քարտեզ

Համար 144, Հունիս 2008թ.

No. 144, July 2008

ماهنامه لویس – شماره ۱۴۴ تیر ماه ۱۳۸۷



Վահիկ Բաղդասարյան

Ո՞վ է կարողանում գրավել երիտասարդությանը

Բոլոր կուսակցությունները, կրոնական խմբավորումները, հասարակական, մշակութային, ազգային ու միջազգային տարբեր կառույցներ ու միավորումներ իրենց նպատակներից մեկը (մի գուցե և կարևորը) համարում են երիտասարդության ներգրավումը իրենց աշխատանքներում: Նրանք աշխատում են իրենց արժեքների հետ ծանոթացնեն երիտասարդությանը որպեսզի վերջիններս ևս ծառայեն իրենց նպատակները իրագործելու ուղղությամբ: Որևէ վիճակագրական փաստացի տվյալներ չկան, թե երիտասարդության քանի տոկոսն է ընդգրկված նման կառույցներում, կամ նման կառույցներին ինչքանով է հաջողվում ներգրավել երիտասարդությանը: Սակայն մեր շրջապատն ուսումնասիրելով կարելի է ասել, որ դա փոքր տոկոս է կազմում:

Այն ազգն է հզոր, որում երիտասարդության բարձր տոկոսն է մասնակից լինում հասարակական, ազգային ու քաղաքական աշխատանքներին և բարձր է նրա երիտասարդության ազգային, հասարակական ու քաղաքական գիտակցության մակարդակը: Կան Ֆակտորներ, որոնք ազդեցիկ են այդ գիտակցության ձևավորման և երիտասարդությանը ներգրավման գործում: Դրանք են՝

1- Երկրի տնտեսական ու հասարակական մթնոլորտը: Ինչքան երկիրը տնտեսապես հզոր է լինում և կյանքի տնտեսական մակարդակը բարձր, ու սոցիալապես այդ երկրի անդամները իրենց ապահով են զգում, մարդիկ հատկապես՝ երիտասարդությունը, ավելի շատ են հետաքրքրվում կամ ժամանակ գտնում հետաքրքրվելու հասարակական ու քաղաքական հարցերով: Կոպիտ ասած՝ մարդն այն ժամանակ է նման հարցերով հետաքրքրվում, երբ «Փորը» կուշտ է:

2- Հասարակական ու քաղաքական միավորների գրավչությունը: Մեր ավանդական կուսակցությունների ներգրավչության մակարդակը շատ է իջել և դրա հիմնական պատճառը նրանց ավանդական մնալն ու ժամանակակից չդառնալն է: Նրանք միայն հեղափոխական ու հատուկ մթնոլորտում են կարողանում երիտասարդությանը ներգրավել, որոնց պահելը նաև մեծ ճիգ ու ջանք և մեթոդների արդիականացումն է պահանջում, որն անբավարար է: Խաղաղ պայմաններում ներգրավման ամենակարևոր միջավայրերից համալսարանն ու միություններն են: Հայաստանում համալսարանն է մեծ Ֆակտոր, սակայն սփյուռքում միություններն ու հավաքական այլ մթնոլորտները:

3- Ազգային ու հասարակական ժամանակակից արժեքներ: Մեր հայ հասարակության մեջ ավանդապաշտները դեռ շատ են, և երբեմն նրանք են ղեկավարում հասարակական ու քաղաքական ինստիտուտները՝ յուրաքանչյուր նոր մոտեցում կամ ավանդներից հեռացում համարելով ազգային արժեքներից դեմ կամ ոչ ազգային: Իրենց իշխանության ներքո գտնվող մթնոլորտում երբեք իրավունք չեն տալիս նման մոտիվների զարգացմանը և հետաքրքրասեր երիտասարդությունն ստիպված այլ միջավայր է փնտրում կամ էլ հրաժարվում է ազգային նման արժեքներից: Ներկայիս երիտասարդությունը անդամ լինելով որևէ կառույցի դժվար թե համոզվի կամակատար լինելու նրա կենտրոնին, կուսակցություններն այդ հարցը լավ շոշափած կլինեն: Մի գուցե տարբեր միջոցներով հնարավոր լինի որոշ երիտասարդների ներգրավել որևէ հասարակական կամ քաղաքական կառույցի մեջ, սակայն դժվար կլինի հին մեթոդներով նրանց պահել այդ կառույցներում:

4- Երիտասարդության Ֆիզիկական ու հոգևոր պահանջների բավարարում: Սա բնական մի երևույթ է, որ բոլորը, հատկապես՝ երիտասարդությունը, պետք է ունենան իրեն բավարարող որոշ դրդապատճառներ՝ մասնակցելու որևէ հասարակաքաղաքական աշխատանքներին: Ժամանակ ու տարբեր մեթոդներ են անհրաժեշտ, որպեսզի երիտասարդը ձեռք բերի հասարակայնությանը և մարդկությանը օգտավետ արժեքներ: Մի գուցե սկզբնական շրջանում նրան հետաքրքրի միայն իր անձնական պահանջները բավարարող մթնոլորտ և ազդակներ, սակայն մի դաստիարակչական գործընթացում է, որ դրանց պետք է աստիճանաբար փոխարինեն ազգագույն և

մարդկությանը օգտավետ արժեքներ: Նման արժեքներն ինքնուրույն չեն ձևավորվում, այդ գործընթացի համար մեծ Ֆինանս ու մարդկային ջանքեր են պահանջվում:

Լուրեր

Իրանահայ Համայնք

Իրան-Հայաստան Բարեկամության Միությունը կայացած է

Իրան-Հայաստան բարեկամության միությունը մեկ տարուց ավել է, ինչ սկսել է իր աշխատանքները՝ 15 հոգանոց հիմնադիր կազմով: Այնուհետև ընտրվել է վարչական կազմ և քննիչ մարմին: Ունի հինգ մասնագիտական հանձնախմբեր. 1- Մշակութային, արվեստից, գրական ու զբոսաշրջիկության բաժին: 2- Հասարակական, տեղեկատվական, զանգվածային լրատվական միջոցների ու հասարակական կազմակերպությունների բաժին: 3- Գիտական, տեխնիկական, կրթական ու հետազոտական բաժին: 4- Տնտեսական, առևտրական ու արդյունաբերական բաժին: 5- Մարզական ու երիտասարդական բաժին: Հասարակական այս միության հիմնական նպատակը երկու երկրների ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդումն ու զարգացումն է՝ գիտական, արվեստի, տնտեսական, տեխնիկական, առևտրական, հասարակական, հաղորդակցության և այլ ոլորտներում: Երկուշաբթի, 2008 թվի հուլիսի 14-ին Թեհրանի «Արարատ» մարզավանում տեղի ունեցավ Իրան-Հայաստան բարեկամության միության (ԻՀԲՄ) հիմնադրման հաղխավոր արարողությունը, որին ներկա էին մեծ թվով հայ և պարսիկ հրավիրյալներ: Հաջորդաբար արտահայտվեցին ԻՀԲՄ-ի նախագահ Լևոն Սահրոնյանը, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության նախկին արտակարգ և լիազոր դեսպան դկտ. Ալիբեգա Հարիդյանը, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Նազարյանը, Հայաստանում Իրանի առաջին դեսպան դկտ. Սրեհանին, Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի նախագահ դկտ. Արդա Հովհաննիսյանը, պարսիկ գրականագետ Մուսավի Գարմարուդին և Իսլամական Խորհրդարանում Իսպահանի և հարավային իրանահայության պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը: Ծրագիրը վարում էր տիկ. ՍեյՖը, որի ընթացքում հայերեն և պարսկերեն երգերով հանդես եկավ Իսլամական Մշակույթի և Առաջնորդության նախարարության երաժշտական գրասենյակի երգչախումբը Ռազմիկ Օհանյանի ղեկավարությամբ: Արարողությունն ավարտվեց հյուրասիրության ջերմ մթնոլորտում:



Տեղի ունեցավ «Րաֆֆի» համալիրի վարչության ընտրությունները

2008 թվականի հուլիսի 8-ին տեղի ունեցան ՀՄՍ «Րաֆֆի» համալիրի վարչության և քննիչ մարմնի ընտրությունները: Վարչության համար պետք է ընտրվեին 7 իսկական անդամ և 2 հոգի անձնափոխանորդ, և քննիչ մարմնի համար երկու հոգի և մեկ հոգի անձնափոխանորդ: Ներկայացվել էին 9 թեկնածուներ վարչության համար, որոնցից 7-ը ընտրվեցին որպես իսկական և երկուսը անձնափոխանորդներ: Քննիչ մարմնի համար

ներկայացվել էին չորս թեկնածուներ, որոնցից երկուսն ընտրվեցին որպես իսկական անդամներ և մեկը անձնափոխանորդ: Վարչության կազմի անդամներ են ընտրվել հետևյալ անձնավորությունները՝ 1- Պետրոս Աբգարյան՝ նախագահ, 2- Նորիկ Խանբաբայի՝ փոխնախագահ, 3- Կարինե Ձեյնալյան, 4- Ռիմա Ձեյնալյան, 5- Ժորես Դիլանջյան, 6- Կարդան Խանբաբայի և 7- Դկտ. Ռայմոնդ Թորոսյան: Անձնափոխանորդներն են՝ 1- Ժոռա Փանոսյան և 2- Էդիկ Բանդարյան: Որպես քննիչ մարմին ընտրվեցին 1- Աշոտ Մահմուդյանն ու 2- Սուրիկ Պետրոսյանը, իսկ որպես անձնափոխանորդ՝ Հրայր Աբգարյանը:

Մարտական մարզաձևերի փառատոն «Րաֆֆի»-ում

2008 թվականի հուլիսի 27-ին ՀՄՍ «Րաֆֆի» համալիրն իր շուրջ էր համախմբել Թեհրանի հայկական միություններում աշխատող մարտական մարզաձևերի խմբերին: Փառատոնի նպատակն էր հայ երիտասարդներին ծանոթացնել այս մարզաձևերի հետ: Սույն փառատոնը կազմակերպվել էր եղբայրներ Արթուր և Արթին Հովսեփյանների նախաձեռնությամբ և տարբեր խմբերի մարզիկների համագործակցությամբ: Սրահը լեփ լեցուն էր թաղեցիներով ու մարզասերներով: Սկզբում հանդես եկավ մարզական բաժանմունքի փոխնախագահ տիկ. Մարիետ Նազարյանը: Փառատոնին մասնակցել էին հետևյալ խմբերը՝

1-Շիտ կանդո: Մարզիչ պրն. Վանիկ Քեչիշյան: Մարզիչ: Պարսկաստանի և Հայաստանի հանրապետության «շիտ- կուն- դո»-ի ֆեդիացիայի մարզիչ, որը պարապել է քոնգ-ֆու հետո .«Շիտ-կուն-դո»-ի հիմնադիր Պրն.Ղահրաման բեյգի մոտ.և մասնակցել է վարպետ ՍիՖո Շորսցի Գերմանիայի .«Շիտ-կուն-դո» նախագահի դասարաններին ու սեմինարներին, հետո տեխնիկապես սովորել է Հայաստանի Հանրապետության .«Շիտ-կուն-դո»-ի ֆեդերացիայի նախագահ պրն. Արտոշա Ղանդոյանի մոտ:

2- Կարատե.- Մարզիչ պրն Լևիկ Նազարյանը: Թեհրանի ֆոդոկան- Շոտրական կառատեի և կովկասի կոնֆեդերացիայի անդամ է: Որակավորում է Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Պ.Կարեն Ավետիսյանի կողմից: Նա պարբերաբար հաճախում է Իրան, որտեղ քննություն հանձնողները համաաշխարհային մասշտաբով ստանում են միջազգային դիպլոմ, որը նրանց հնարավորություն է տալիս շարունակելու ցանկացած օտար երկրի ֆեդերացիայում:

3-Քոնգ ֆո Շաջիկ: Մարզիչ պրն Ռայմոնդ Չափանյան: Շաջին .Քոնգ ֆուն ճանաչված է որպես ամբողջ մարտական ճյուղերի մայր, որը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ ներքին և Արտաքին:

Շաջին Քոնգ ֆուն կազմված է ձեռքի և ոտքի արագ և մահացու հարվածներից, նույնիսկ գործադրվում են տարբեր զենքեր, օրինակ՝ փողատ, դառ, շիանշո, քառանդատ և սանչիքո:

Full kick Boxing՝ Արթուր և Արթին Հովսեփյանների դասավանդման միջոցով: Արթուր Հովսեփյանը ասպարեզ է մուտք գործել 15 տարեկան հասակից, այժմ ֆեդերացիայի պաշտոնական մարզիչ և իրավարար է, որն ունի չորրորդ դաս:

2005 թվին ախոյան է հանդիսացել wako մրցություններում, որոնք տեղի են ունեցել Հայաստանում: 2006 թվին ախոյան է հանդիսացել Ekita մրցություններում, որոնք կայացել են Դուբայում:

Արթին Յովհաննիսյանը մարզական ասպարեզ է մտել 13 տարեկան հասակում, ունի երրորդ դաս և ֆեդերացիայի պաշտոնական մարզիչ է: Արթինը իրանահայության մեջ հանդիսանում է այդ մարզածիկ ներկայացուցիչը: Նա քանի շրջան պարբերաբար հանդիսացել է երկրի ախտյան և փոխչեմպիոն: FKBF մրցություններում, որոնք տեղի են ունեցել Բաքվում՝ 2003 թվին: Այժմ դասավանդում է Շահին ակումբում:

Թղթակից: Նարինե Նաջարյան

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության պատվավոր ցուցակում են ընդգրկվել ԻԻՇ տարածքում գտնվող երեք հայկական պատմական հուշարձանային համալիրներ

ԵՐԵՎԱՆ, 10 ՅՈՒՆԻՍԿՕ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Կանադայի Քվեբեկ քաղաքում անց է կացվում (հուլիսի 2-10-ը) ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 32-րդ նստաշրջանը, որի ընթացքում հուլիսի 6-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության պատվավոր ցուցակում են ընդգրկվել Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) կողմից առաջադրված Արեւմտյան Ատրպատականում գտնվող երեք հայկական վանահամալիրները՝ Սուրբ Ստեփանոս, Սուրբ Թադեոս Առաքյալի եւ Չոր Չորի մատուռը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, ԻԻՀ կողմից հայկական հուշարձանների ներկայացումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում, որին Հայաստանն իր ամենայն աջակցությունն է ցույց տվել գործընթացի բոլոր փուլերում, միջնակայության համագործակցության ու փոխընթացման վառ դրսևորումն է: Այն հիմնված է դարերով միմյանց հարեւանությամբ ապրած ժողովուրդների միջև առկա հարգանքի, նրանց պատմությունն ու ժառանգությունը որպես քաղաքակրթությունների ձեռքբերում դիտարկելու եւ արժեւորելու մտտեցման վրա:

Նույն օրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում են ընդգրկվել եւս երեք հուշարձաններ՝ Մավրիտանիայի Լե Սորնե մշակութային լանդշաֆտը, Սաուդյան Արաբիայի Ալ Հիջր հնագիտական տարածքը եւ Չինաստանում գտնվող Ֆուջիան Տուլոու հուշարձանը:

Նշենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման մասին կոնվենցիայի շրջանակներում վերը նշված ցուցակում ընդգրկված են շուրջ 851 համաշխարհային նշանակության արժեքներ:

Հայաստան

ԳՈՐԾԱՐԱՐ ՍԱՍՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՆԵՐԴՆԵԼ 250 ՄԼՆ ԴՈԼԱՐ

«Ազգ» օրաթերթ 17.07.2008 - Նախագահ Սերժ Սարգսյանը «Բազե» համահայկական երիտասարդական հավաքում ուղերձով դիմեց ՀՀ քաղաքացիներին եւ աշխարհասփյուռ հայորդիներին՝ կոչ անելով ավելի ակտիվ ու նախաձեռնող լինել հայրենիքի շենացման նախաձեռնություններում եւ համատեղ ուժերով ծաղկեցնել հայրենիքը: Ըստ Արմենպրեսի, առաջին արձագանքն է ստացվել ռուսաստանաբնակ հայ գործարար Սամվել Կարապետյանից, որը նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված նամակում գրում է. «Հայաստանը բոլորիս հայրենիքն է, ու անկախ աշխարհագրական

հեռավորությունից յուրաքանչյուրիս հոգու ու սրտի մի մասը մշտապես հայրենիքում է, ապրում է մեր երկրի, մեր հող ու ջրի, մեր եղբայրների ու քույրերի ցավով ու մտահոգությամբ: Ինձ համարում են ձեր նախաձեռնության աջակիցը, որովհետեւ անկախ որեւէ մեկի ֆինանսական կարողության չափից, մեր միակ հարստությունը մեր հայրենիքն է, մեր միակ հպարտությունը մեր արմատներն են ու մենք բոլորս՝ ազգովին, հարուստ կլինենք միայն այն ժամանակ, երբ շեն ու ծաղկող տեսնենք մեր երկիրը: Արձագանքելով Ձեր կոչին՝ մոտ ապագայում պատրաստ եմ 200 միլիոն դոլար ներդնել գործարար ու սոցիալական նախագծերում ու եւս 50 միլիոն դոլար էլ նախատեսում եմ հատկացնել Հայաստանում որեւէ խորհրդանշական նախագծի իրականացման համար, որը, հուսով եմ, կօժանդակի մեր պետականությանն ու կօժառայի գալիք սերունդներին»: Նշենք, որ «ՄոնԱրխ» ընկերության նախագահ Սերգեյ Համբարձումյանը եւս, արձագանքելով ՀՀ նախագահի կոչին, խոստացել է նվիրաբերել 10 մլն դոլար: Համբարձումյանի գործունեության մասին:

ՎԱՅԹՈՒՐԵԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՓՈՒՄՆԵՐԸ ԵՐԲԵՔ ԶԵՆ ԴԱԴԱՐԵԼ, ԺՆԵՎՅԱՆ ՎԱՆԴԻՊՈՒՄՆ ԷԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է



Նախագահ դառնալուց 100 օր անց. «Իհարկե լինում են օրեր, որ հոգնում եմ, բայց ես ընդհանրապես հոգնած չեմ»

Բարեփոխումներ, կադրային վերադասավորումներ

Հարկային, մաքսային վարչարարության եւ ճանապարհային ոստիկանության բարեփոխումների առնչությամբ նախագահը համոզված է, որ կատարվածը ծանր եւ մեծ աշխատանքի սկիզբն է: «Սկսել ենք այն ոլորտներից, որոնք չափազանց էական ու կարեւոր են մեր ժողովրդի համար եւ որոնք իմ նախընտրական ծրագրի առաջնայնություններից էին», երեկ իր պաշտոնավարության 100-րդ օրվա առթիվ կայացած մամուլ առուխուսմ ասաց ՀՀ նախագահը: Ըստ Սերժ Սարգսյանի, կարելու է, որ գոյ լինի ոչ միայն ինքը, այլեւ հասարակությունը: Կադրային նոր փոփոխությունների առումով նախագահը գտնում է, որ դա միշտ էլ սպասելի է: «Վերադասավորումները ընդհանուր առմամբ համարում եմ չավարտված: Հիմնական նշանակումները կատարվել են, ես իմ պահանջները ձեւակերպել եմ պետական պաշտոնյաների հանդեպ եւ ովքեր կկատարեն այդ պահանջները, շարունակելու են աշխատել: Իսկ ովքեր ոչ՝ նրանց կփոխարինեն ուրիշները»:

«Համակարգում կան բազմաթիվ մարդիկ, ովքեր 100 տոկոսով կողմ են բարեփոխումներին, ովքեր պատրաստ են ազնվորեն աշխատել: Ես հստակ գիտակցում էի, որ դժգոհողներին ավելանալու էին նոր դժգոհողներ, որոնց ձեռքում կենտրոնացված են լծակներ, ֆինանսներ եւ այլն: Բայց մյուս կողմից էլ վստահ եմ, որ մեծամասնությունը մեր կողմում է...», կոռուպցիայի ու հովանավորչության դեմ պայքարի առումով այսպիսին է նախագահի մտտեցումը: Հայաստան-Թուրքիա... Սարգսյան-Քոչարյան...

«Ազգը» հետաքրքրվեց, թե որքանով են համապատասխանում իրականությանը հայ-թուրքական գաղտնի բանակցությունների մասին թուրքական մամուլի հրապարակումները: «Ինչ վերաբերում է գաղտնի

շփումներին կամ ընդհանրապես հայ-թուրքական շփումներին, ապա այդ շփումները երբեք չեն դադարել: Մշտապես պետական պաշտոնյաները, դիվանագետները շփվել են եւ որեւէ սենսացիա չեն տեսնում, որ ժմեւում եւս հանդիպել են հայ եւ թուրք դիվանագետներ»:

Հայկական կողմը պատրաստ է սպասելու Անկարային ուղղված հրավերի պատասխանին, Սարգսյանը կարելորեց ոչ թե ժամկետը, այլ հայկական եւ թուրքական հասարակություններում նշմարվող միտումները՝ քննարկելու առկա խնդիրները: «Չնայած որոշ թուրք քաղաքական գործիչների եւ պաշտոնյաների հայտարարություններին, թե հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն Հայաստանին, ես այդպես չեն կարծում: Բարելավումը փոխշահավետ կլինի»: Ռոբերտ Քոչարյանի հայտարարության վերաբերյալ, թե իր ղեկավարելու դեպքում Թուրքիայի նախագահը հրավեր չէր ստանա, եւ արդյոք կա՞ն հակասություններ իր եւ Քոչարյանի միջև, Սեթ Սարգսյանը պատասխանեց. «Կարծում եմ, Քոչարյանի հայտարարությունը որեւէ քննադատություն չի պարունակում, ուղղակի նախագահ Քոչարյանն իր անհամաձայնությունն է հայտնել իմ կոնկրետ քայլի նկատմամբ: Նախկինում էլ բոլոր հարցերում չէ, որ մենք միակարծիք ենք եղել եւ ես նախընտրել եմ իմ կարծիքը հայտնել ոչ հրապարակաւ: Ես հարգում եմ նրա՝ հրապարակաւ իր կարծիքը հայտնելու որոշումը: Ինչ վերաբերում է խոր հակասություններին, շատ երկար տարիներ բազմաթիվ մարդիկ փորձել են հակասություններ, տարածայնություններ գտնել իմ եւ Քոչարյանի միջև: Ընդ որում, այդ մարդիկ եղել են ոչ միայն ընդդիմության ներկայացուցիչներ, այլեւ մարդիկ, որ գտնվել են իշխանության մեջ, բայց բավարարված չեն եղել իրենց դիրքով, միգուցե ոմանք իմ համարել են իրենց հակառակորդ, մշտապես փորձել են բաժանել, գոտեցնել մեզ: Դա նրանց չի հաջողվել: Հիմա էլ նույնն է շարունակվում: Այդ մարդիկ ուղղակի չկարողացան հասկանալ, որ իրենց ջանքերը զուր են»:

«Պետության կառավարումը բիզնեսի կառավարում չէ, որտեղ հնարավոր է գործադիր տնօրենի նշանակում, իսկ սեփականության իրավունքը կարելի է պահել ու ղեկավարել», իբր Քոչարյանի կողմից երկիրը դեռեւս կառավարվելու մասին հարցին այսպես արծազանքեց նախագահը, ավելացնելով, որ որոշումներ կայացնելիս խորհրդակցում է ինչպես Քոչարյանի, այնպես էլ կոալիցիոն գործընկերների, մասնագետների հետ: Ռուսաստան, Իրան, Վրաստան, ԱՄՆ...

«Մենք իրավունք չունենք մեր դաշնակիցներից, մեր բարեկամներից պահանջելու փչացնել հարաբերությունները այն երկրների հետ, ում հետ մենք բարեկամական հարաբերությունների մեջ չենք», խոսելով Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների ֆոնին Հայաստանի դիրքորոշման մասին՝ նշեց Սարգսյանը, կարելորելով, որ ռուս-ադրբեջանական հարաբերությունները չբարելավվեն հայ-ռուսական հարաբերությունների հաշվին: Ըստ Սարգսյանի, այս համատեքստում մեկնաբանություններ անողները երկու բան են մոռանում, նախ, որեւէ երկրի նախագահ չի կարող չճանաչել պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը այնպես, ինչպես չի կարող չճանաչել ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ընդ որում, պրոպագանդվող նույն այդ ձեւակերպումներն առաջին անգամ ռուս-ադրբեջանական փաստաթղթերում տեղ են գտել դեռեւս 1997-ին:

Հայաստանի արտաքին քաղաքականության աշխուժացման, նաեւ Իրան-Իսրայել-ԱՄՆ համատեքստում միջնորդի դերով հանդես գալու առնչությամբ Սարգսյանը նախ նշեց. «Իրանը մեզ համար կարելոր գործընկեր է, ոչ միայն աշխարհաքաղաքական առումով, այլեւ, որ ունենք լավ գործընկերություն, մեծ հայկական համայնք, ընդհանուր

պատմություն... Իսրայելում ապրում են տասնյակ հազարավոր հայեր, ունենք ընդհանուր եզրեր ունեցող ողբերգություն... Միացյալ Նահանգների հետ մենք լավ գործընկերներ ենք, ԱՄՆ-ը մեր բարեկամ երկրներից մեկն է, այնտեղ 1 մլն-ից ավելի հայ է ապրում եւ՝ իհարկեւ, մենք չէինք ցանկանա հետագա բարդացումներ: Բայց, մյուս կողմից՝ չեն կարծում, որ սա այն դեպքն է, երբ Հայաստանը պետք է հանդես գա միջնորդի առաքելությամբ եւ իր ծառայությունները առաջարկի: Եթե այդ երկրներից որեւէ մեկը կամ միասին վերցրած հարկ կհամարեն օգտագործել Հայաստանի հնարավորությունները, միայն ուրախ կլինենք ունենալ մեր ներդրումները խաղաղության պահպանման գործում: ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունները չափազանց շատ կարելոր են, Միացյալ Նահանգները անկախացումից հետո հսկայական մարդասիրական ու ֆինանսական օժանդակություն են մեզ ցուցաբերել, իրականացնում ենք ծրագրեր, ԱՄՆ-ը ՄԻ-ի համանախագահ է եւ այսօր էլ խորացնում ենք մեր հարաբերությունները: Վաստե՞մ, որ մի քանի ամսից՝ ԱՄՆ-ի ընտրություններից հետո մենք շարունակելու ենք խորացնել մեր հարաբերությունները»:

Ռուսաստանի հետ այսօր Հայաստանը ունի այնպիսի լավ հարաբերություններ, ինչպիսին հնարավոր է ունենալ երկու երկրների միջև: «Շատ հարցերում մենք Ռուսաստանի հետ ունենք համանման մոտեցումներ, ինչը դյուրացնում է համագործակցությունը միջազգային կառույցներում: Մեղվեղեի սպասվող այցն էլ Հայաստան կնպաստի դրան», կարելորեց հանրապետության նախագահը: Հարեւան Վրաստանի հետ հարաբերությունների մասին «Ազգի» հարցին էլ Սարգսյանը պատասխանեց. «Հարաբերությունները խորացնելու ենք նաեւ Վրաստանի հետ: Մենք չափազանց կարելորում ենք կայունությունը Վրաստանում, որովհետեւ Վրաստանը այն երկու երկրներից մեկն է, որոնց վրայով Հայաստանը կապվում է արտաքին աշխարհին: Կարծում եմ, որ մոտակա ամիսներին մենք պաշտոնական շփումներ կունենանք Վրաստանի նախագահի հետ»:

Մարտյան իրադարձություններ, երկխոսություն...

Մարտյան իրադարձություններից հետո ձեռքբերվածներին ու կալանավորվածներին ազատ արձակելու առնչությամբ Սարգսյանը ընդգծեց, որ ինտենսիվ զբաղվում է այդ հարցով: Եվս մեկ անգամ հայտարարեց, որ դրական է գնահատում դատախազության եւ դատարանների գործունեությունը՝ այն մարդկանց հանդեպ մեղմություն ցուցաբերելու առումով, որոնց հանցանքը մեծ չէ: «Բայց, մյուս կողմից էլ, մենք իրավունք չունենք մատների արանքից նայելու այս իրադարձություններին եւ չտեսնելու այն մարդկանց, ովքեր ծանր հանցանք են գործել, ովքեր կազմակերպել են զանգվածային անկարգություններ, ջարդել, փշրել, ձեռք են բարձրացրել ուրիշի սեփականության վրա: Եթե մենք չափից դուրս մեղմ լինենք, դրանով շատ վատ ծառայություն մատուցած կլինենք մեր հասարակությանն ու երկրին: Շատ մարդիկ ապագայում կգայթակղվեն այդպիսի արարքներով, եւ կհամարեն, որ յուրաքանչյուր ընտրությունից հետո եւ ընդհանրապես կարելի է ուժի միջոցով խնդիրներ լուծել: Սա մենք պետք է բացառենք եւ բացառելու ենք»:

Բոլորի նախագահ լինելու Սարգսյանի հայտարարության ու ընդդիմության հետ երկխոսության առումով նախագահը նշեց. «Ես հիմա էլ եմ կարծում, որ բոլորի նախագահն եմ, նաեւ այն մարդկանց, ովքեր իմ իրենց նախագահը չեն համարում»: Սարգսյանն ավելացրեց, որ երկխոսության առնչությամբ հասարակության ընկալումն այնքան էլ ճիշտ չէ: «Երբ ասում եմ երկխոսություն, նկատի ունեմ երկխոսություն ժողովրդի հետ, երկխոսություն հասարակության ներսում, երկխոսություն պետություն-հասարակություն ֆորմատով: Եվ ոչ թե երկխոսություն հանրապետության նախագահի եւ որեւէ անհատի միջև:

Այդպիսի պրոցեսները շարունակական պետք է լինեն եւ երբեք չպետք է համարել, որ երկխոսության որեւէ ֆորմատ ուշացած է: Ես միշտ իմ աշխատասենյակում եմ...»: Ակնարկելով ԳՅ առաջին նախագահի առաջարկը, Ս. Սարգսյանը նշեց. «Եթե մարդկանց նպատակը նոր ընտրությունների անցկացումն է, ինչի՞ մասին պիտի երկխոսենք, թե ե՞րբ անցկացնենք այդ ընտրությունները: Ես արդեն հոգնել եմ ընտրություններից», կրկին երկխոսության թեմային անդրադառնալով ասաց նախագահը, հավելելով, որ համապետական ընտրություններ կլինեն իր ժամանակին՝ 4 տարի անց:

ԼՂ հարց եւ... ոչ միայն

«Ես Լեռնային Ղարաբաղի խնդրում մնում եմ այն դիրքորոշմանը, որին եղել եմ սկսած 94-93 թթ. Որեւէ լուրջ փոփոխություն չի եղել իմ դիրքորոշման մեջ եւ այն ես պահպանելու եմ շատ երկար»: Ադրբեջանի ռազմատենչության պատասխանն, ըստ Սարգսյանի, այն է, որ քանի դեռ խաղաղության պայմանագիր չի ստորագրվել, երկրում առնվազն երկու պաշտոնյա՝ նախագահն ու պաշտպանության նախարարը պետք է համարեն, որ հենց վաղը կարող է պատերազմ սկսվել եւ ջանքեր գործադրել: «Մեր ամենից հզոր փաստարկը մեր բանակն է, մեր զինված ուժերը, եւ մենք ջանք չենք խնայելու, որ զինված ուժերը լինեն մարտունակ: Ես մեկ անգամ եմ հանդիպել նախագահ Ալիևի հետ, եւ իմ տպավորությամբ խնդրի խաղաղ լուծման միջոցները չեն սպառվել»: Ադրբեջանի կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքից բողոքելու առնչությամբ էլ Սերժ Սարգսյանը նշեց. «Եթե ադրբեջանցիները բողոքում են Մինսկի խմբի աշխատանքներից, ապա հայկական կողմը կարող է հանգիստ լինել»:

ԲԱՑԱՆԱՅՏՎՈՒՄ ԵՆ ԸԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՃՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Ստեղծվում է ոչ թե մեկ, այլ չորս հանձնաժողով

3. ՉԱԵՐՅԱՆ

Հուլիսի 18-ի համարում «Հյուրիեթը» առանց մանրամասնելու հայտնել էր, թե հայ-թուրքական գաղտնի շփումներ են անցկացվել Շվեյցարիայի Բեռն քաղաքում: Թուրքական թերթի տեղեկությունը նախ այն արձագանք գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում, ապա եւ հաստատվեց:

Սակայն գաղտնի շփումների պարագայում կարելիորդ ոչ այնքան դրանց արձագանքը, կամ հաստատումն է, որքան մանրամասներն են: Հուլիսի 19-ին հենց այդ շփումների մանրամասներին է անդրադարձել Նյու Յորքի «turkishny.com» կայքէջը: Ահա թե ինչ է գրել.

«Նախագահ Սերժ Սարգսյանի մեղմ ազդանշանները ուղղակի հանդիպումների առումով խթան էին շուրջ 10 տարի Հայաստանի հետ ոչ պաշտոնական շփումներ անցկացնող Թուրքիայի համար: Պարզվեց, որ արտագործնախարարության խորհրդակցական (համագործակցության) պետի պաշտոնին) Էրթուրդու Ափաքանն ու խորհրդակցականի Միջին Ասիայի եւ Կովկասի գծով տեղակալ Ունալ Չելիքոզը իրենց հայ գործընկերների հետ մայիսին եւ հուլիսին շփումների երկու փուլ են անցկացրել:

Թեև արտագործնախարար Ալի Բաբաջանը հաստատեց Թուրքիայի եւ Հայաստանի միջև ժամանակ առ ժամանակ անցկացվող շփումների փաստը, սակայն խուսափեց մանրամասնություններ հաղորդելուց: Ստացած տեղեկությունների համաձայն, Անկարան մտահոգված է, որ եթե այս գաղտնի շփումները հասարակական հնչեղություն ստանան, ապա դա կխթանի Ադրբեջանի հավանական հակազդեցությունը:

«Թրքիչ դեյլի նյուսի» ստացած տեղեկությունների համաձայն, Ափաքանի եւ Չելիքոզի մասնակցությամբ Շվեյցարիայի Բեռն քաղաքում անցկացված գաղտնի շփումների ժամանակ կողմերն առկա խնդիրների լուծման ռազմավարության եւ մեխանիզմների հարցերում մեծապես եկել են համաձայնության:

Պարզվել է, որ հանդիպման օրակարգում մեկ հանձնաժողով ստեղծելու հարցի փոխարեն, դրվել են սահմանների, ցեղասպանության պնդումների, փոխհատուցման հարցի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների հանձնաժողովներ ստեղծելու խնդիրները: Ինչ վերաբերում է դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, ապա որոշվել է այդ հարցը առանձին քննարկել եւ քննարկման համար ստեղծել մի շարք հանձնաժողովներ: Հայաստանի նախորդ նախագահ Ռեբերտ Քոչարյանը մերժել էր ցեղասպանության պնդումների ուսումնասիրման համար պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առաջարկը: Քոչարյանը համառորեն պնդել էր, որ պետք է միջպետական հանձնաժողով ստեղծվի, այլ ոչ թե պատմաբանների: Այս անգամ, ինչպես նշում են դիվանագիտական աղբյուրները, ջանք է գործադրվում ստեղծելու խորհրդակցական այնպիսի մեխանիզմ, որն ընդունելի լինի երկու երկրների համար:

Ափաքանի եւ Չելիքոզի մասնակցությամբ իրականացված հանդիպմանը առաջնահերթ նշանակությամբ քննարկվել է Թուրքիա-Հայաստան սահմանի բացման հարցը: Երկար ժամանակ ի վեր եվրոմիությունն ու ԱՄՆ-ն Անկարային համոզում են, որ ցեղասպանության Հայաստանի թեզը միջազգային պլատֆորմներում թուլացնելու լավագույն ձևը հայ-թուրքական սահմանի բացումն է»:

Վերջում «turkishny.com» կայքէջը հիշեցնում է սեպտեմբերի 6-ին նախատեսվող Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար նախագահ Սերժ Սարգսյանի Աբդուլլահ Գյուլին արած հրավերը եւ նշում է նախքան հանդիպումը՝ օգոստոսին հայ-թուրքական շփումների 3-րդ փուլի անցկացման հավանականության մասին:

Հայաստանում սկսվել են շարժական ինտերնետային համակարգչային կենտրոնի ստեղծման աշխատանքները

ԵՐԵՎԱՆ, 3 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանում սկսվել են շարժական ինտերնետային համակարգչային կենտրոնի ստեղծման աշխատանքները: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրեց Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տնօրեն Արեգ Գրիգորյանը, այդ նպատակով նախապես հայտարարված մրցույթում հաղթել է «Մեդիտեք» ընկերությունը: Կենտրոնն իրենից ներկայացնելու է ավտոմեքենա՝ համապատասխան սրահով՝ նախատեսված 6 աշակերտի եւ 1 ուսուցչի համար: Այն հագեցած է լինելու ժամանակակից տեխնիկայով եւ ապահովված ինտերնետ կապով: Ավտոմեքենաները կայցելեն հանրապետության հեռավոր շրջանների դպրոցներ, որտեղ ուսուցիչները կանցնեն վերապատրաստման դասընթացներ, իսկ աշակերտները՝ պարապմունքներ: Դասավանդման կրթական ծրագիրը նախապես կհաստատվի ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից: Շարժական ինտերնետային

համակարգչային կենտրոնի ստեղծման ուղղությամբ ԿՏԱԿ-ը կազմակերպել է խորհրդակցություններ եւ քննարկումներ նման աշխատանքների փորձ ունեցող կազմակերպությունների եւ մասնագետների հետ, կազմվել է կենտրոնի տեխնիկական բնութագիրը: Ա. Գրիգորյանը հույս հայտնեց, որ շարժական ինտերնետային համակարգչային կենտրոնը հնարավոր կլինի շահագործել այս տարվա նոյեմբերից:

ՋԵՐՄՈՒԿՈՒՄ ԿԿԱՌՈՒՑՎԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍԱՀՈՒՂԻ

Կառավարության պահուստային ֆոնդից Վայոց ձորի մարզպետարանին 2008-ի ինն ամսում կհատկացվի 270 մլն դրամ: Դրանից 70 մլն դրամը Ջերմուկ քաղաքի ճնայանուղու տարածքի բարեկարգման, 200 մլն դրամը՝ Ջերմուկի նոր դահուկային սահուղու կառուցման համար:

Իրան

ԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ ԸԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԸԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հուլիսի 18-ին պաշտոնական այցով Անկարայում գտնվող Իրանի արտգործնախարար Մանուչեիր Մոթթաքին հեռախոսագրույց է ունեցել հայ գործընկերոջ՝ Էվվարդ Նալբանդյանի հետ: Այցի ավարտին միայն հայտնի դարձած հեռախոսագրույցի մասին տեղեկացրել է Թուրքիայում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունը, մշելով, որ կողմերը քննարկել են տարածաշրջանային զարգացումներին եւ երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

Պաշտոնական ԻՐՆԱ գործակալության տվյալներով, Մոթթաքին գոհունակությամբ է մշել վերջին շրջանում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ձեւավորվող բարենպաստ մթնոլորտի մասին եւ հույս է հայտնել, որ այդ մթնոլորտը կնպաստի հարեւան երկրների բարեկամությանն ու խաղաղությանը: Իսկ Նալբանդյանը բարձր է գնահատել հարեւան երկրների միջեւ կառուցողական երկխոսություն հաստատելու Իրանի նախաձեռնությունները:

Քաղաքական դիտորդները խորհմաստ են համարել ՀՀ արտգործնախարարի հետ Մոթթաքիի Անկարայից վարած հեռախոսագրույցը: Այդ ընթացքում ԻՐՆԱ-ն դա գնահատել էր հայ-թուրքական հարաբերություններում նախաձեռնություն ստանձնելու դրսեւորում, ընդգծելով, որ Իրանը որպես վստահելի երկիր, տարածաշրջանում կարող է միջնորդի դեր կատարել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ՝ օգտագործելով Երեւանի հետ ջերմ հարաբերությունները:

Ի դեպ, այս ամենի մասին երեկ կայքէջում տեղեկացրել է Պոլստ «Հայ թերթը»:

Սփյուռք

ՍՓՅՈՒՌԸ ՀԱՏ ՉԼՈՒԾԱԾ ԸԱՐՅԵՐ ՈՒՆԻ

ԾԱՂԿԱԶՈՐ, 17 ՀՈՒՆԻՍԻ, ԱԶԳ - ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: ՀՀ ԱԳՆ սփյուռքի հարցերով նորաստեղծ կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը Ծաղկաձորում հանդիպեց «Գրողների 4-րդ համահայկական համաժողովի» մասնակիցներին ժամանած 17 երկրներից: Հանդիպման նպատակը՝ տեղեկանալ այն բոլոր խնդիրներին ու

պրոբլեմներին, որոնք տարիներ շարունակ ծառայել են սփյուռքի տարբեր համայնքներում եւ դրանց լուծման ուղիներ ու ելքեր գտնել: Նա ներկայացրեց նոր ձեւավորված կառույցի աշխատանքները եւ մշեց. «Հատկապես գրողներից ակնկալում եմ, որ մեր անկախ պետության տեսլականը, հայրենիքի ու հայրենասիրության գաղափարի շուրջ համախմբվելու բանաձեւ առաջարկեք, որը դեռեւս չենք գտել: Մենք համախմբվում ենք մեծ վշտի շուրջ, բայց հայրենիքի կառուցման ու վերածնունդի հարցում էլ յուրաքանչյուր հայ պետք է մասնակից լինի եւ համախմբված»:

Հայրենիք-սփյուռք գործակցության ձեւերի, մեթոդների շուրջ լրջորեն աշխատելու համար Հրանուշ Հակոբյանը առաջնահերթ համարեց սփյուռքը ճանաչելը. «Քազմաշերտ, բազմաբովանդակ առանձնահատկություններով, խորքային նկարագրով սփյուռքը ճանաչելը կօգնի արդյունավետ աշխատելուն: Կարծում եմ այս նոր կառույցը պետք է կոչվի սփյուռքի տուն, որտեղ պետք է աշխատեն նաեւ սփյուռքահայեր ու նախարարությունը դառնալու է սփյուռքահայերի հենարանը, իսկ դուք՝ մեր դեսպանները սփյուռքում»:

Կառույցն արդեն մշակում է «Դեպի հայրենիք» ծրագիրը, որը նախատեսում է մինչեւ 30 տարեկան յուրաքանչյուր հայ երիտասարդի այց հայրենիք, հայկական մեկ ընդհանուր համացանց ստեղծելու աշխատանքներ են տարվում նաեւ: Առաջիկայում նախատեսվում է ԵՊՀ-ում բացել սփյուռքագիտության ամբիոն, որը հետագայում Վ. Սարոյանի անվան ակադեմիա ստեղծելու հիմք կդառնա:

Սփյուռքի կառույցների ներկայացուցիչները առաջարկեցին հայրենիքում կազմակերպվող կարեւոր միջոցառումների մասին տեղեկացնել որքան հնարավոր է շուտ, այլ ոչ թե 2-3 ամիս առաջ: Համընդհանուր էին դժգոհությունները Հանրային հեռուստաընկերության հաղորդավարներից եւ ընդհանուր քաղաքականությունից: Խոսվեց նաեւ դպրոցների փակման, դասագրքերի, ուսուցիչների բացակայության մասին ու առաջարկվեց այս խնդիրներով զբաղվող հանձնախումբ ստեղծել: ԱՊՀ երկրների սփյուռքի անհանգստությունը կիրակնօրյա դպրոցներն էին, որոնք իրենց դերը չեն կատարում: Իհարկե ուղղագրության հարցը կրկին բարձրացվեց: Առաջարկներ եղան սփյուռքի խորհրդարան ու մարմին ստեղծել, սփյուռքի համար մեկ նոր թերթ հիմնել, մշակութային «աղբը» սփյուռքում չներկայացնել պետության անվան տակ: Հնչեց նաեւ համաժողով գումարելու գաղափարը, որտեղ ամեն կառույց ցանկալի է, որ ներկայանա իր խնդիրներով:

Հանդիպումից հետո Հրանուշ Հակոբյանը ի պատասխան «Ազգ»-ի հարցի, տեղեկացրեց. «Այն ամենը, ինչի մասին հայտնեցին սփյուռքի գրողները, պետք է ի մի բերել, դասակարգել, հասկանալ յուրաքանչյուրի պահանջը, տեսնել թե պետությունը այստեղ ինչ անելիք ունի եւ դրանց ընթացք տալ: Որեւէ հարցադրում չպետք է թղթի վրա մնա: Եթե նույնիսկ չենք կարող լուծել, դրա մասին պետք է տեղեկացնենք մեր հայրենակիցներին: Աշխատանքային բնույթի համաժողովներին կողմնակից եմ, քանի որ միայն դրանցում է լուրջ աշխատանքներ տարվում, եւ այս հանդիպումն էլ նման բնույթի էր»:

Հասարակական

**«ՄԻԱՄՆԱԿԱՆ ՋԱՎԱԽՔ»
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ՎՐԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԱՎԱՀԱՅՎԱԿԱՆ ՆՈՐ ՍԱԴԻՐԻՉ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը խստագույնս դատապարտում է Վրաստանի իրավապահ մարմինների կողմից հուլիսի 21-ին տեղի ունեցած Դաշինքի անդամներ Վահագն Չախալյանի և նրա հարազատների՝ հոր ու եղբոր ապօրինի ձերբակալությունները՝ չպատճառաբանված և անհասկանալի պայմաններում:

Վրաստանի իրավապահ մարմիններին ընտանի դարձած հակահասարակական վարքագծին հավատարիմ, նախապես ծրագրված սադրանքն ի կատար ածելով, հուլիսի՝ լույս 21-ի ուշ գիշերին՝ ժամը 04:00-ին մոտ, վրացական դիմակավորված, զինված հատուկ ջոկատայինները ներխուժելով Վահագն Չախալյանի հայրական տուն՝ կոպիտ ու անհանդուրժելի վերաբերմունք ցուցաբերելով՝ անհիմն և շինծու մեղադրանքներով, կալանավորել են տան անդամներին, խուզարկել տունն ու ձերբակալել նրանց: Մայրը, միայնակ, ժամը 05:00-ին մոտ ազատ է արձակվել, իսկ Վահագն Չախալյանին, հորը՝ Ռուբիկ Չախալյանին և անչափահաս եղբորը՝ Արմեն Չախալյանին, մի քանի ժամ Ախալքալաքում կալանքի տակ պահելուց հետո, տեղափոխել են Մամջիսե-Ջավախքի մարզկենտրոն՝ Ախալցխա: Այնուհետև, ձերբակալության մեկ օրը չլրացած՝ Վահագն Չախալյանին և նրա հարազատներին տեղափոխել են Թբիլիսի՝ երկու ամսով երկարաձգելով ազատության ժամկետը:

Միջադեպին հետևած Դաշինքի մի քանի անդամների ձերբակալությունները, մեղադրյալների շուտափույթ տեղափոխությունն էթնիկապես «ապահով» համարվող Ախալցխա, ապա՝ Թբիլիսի, անդամներից մեկին Ախալցխա տեղափոխելը, Գուրգեն Շիրինյանի հարազատներին անօրինական կերպով ձեռի ենթարկելն ու կալանքի տակ պահելը վկայում են, որ Վրաստանի իշխանություններն ազգային փոքրամասնությունների և, մասնավորապես՝ ջավախահայության ազգային և քաղաքացիական իրավունքները հարգելու հարցում մտադիր չեն առաջնորդվելու սահմանադրորեն ամրագրված օրինականության և միջազգայնորեն ստանձնված պարտավորությունների պահանջներով: Ջավախքում և ներկայիս Վրաստանի ողջ տարածքում մոլեգնող հակաժողովրդավարական և քաղաքական ցանկացած այլակարծությանն անհաշտ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ համահասարակական անհանդուրժողականությունը սերմանող թբիլիսյան այժմյան վարչակարգը պետք է քաջ զիտակցի նման քաղաքականության կործանարար հետևանքները՝ երկրի միջազգային վարկի, նրա քաղաքացիների բարօրության, անվտանգության և տարածաշրջանային կայունության համար:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը կրկին դատապարտում է ջավախահայության իրավունքների զանգվածային ռոտահարման, ուժային ապօրինի և սադրիչ գործողություններով բնակչությանն անհրեկելու և վարչակարգի կողմից «չվերահսկվող» քաղաքական գործիչներին անհիմն և ակնբախորեն անհեթեթ մեղադրանքներով ձերբակալելու թբիլիսյան իշխանությունների քաղաքականությունը, որն արդեն իսկ կանգնեցրել է

ջավախահայությանն անցանկալի հետևանքներով հղի համընդհանուր ըմբոստության շեմին:

Դաշինքն ամենայն վճռականությամբ պահանջում է անհապաղ ազատ արձակել ապօրինաբար կերպով կալանքի տակ պահվող Վահագն Չախալյանին և նրա հարազատներին, կարճել հարուցված անհեթեթ ու անհիմն քրեական գործերը և դադարեցնել երկրամասի հայության խորացող անհրեկումն՝ ուժային կառույցների սադրիչ ներգրավվածությամբ:

Դաշինքը տեղյակ է պահում հանրությանը, որ ջավախահայության արդար և համընդհանուր վճռականությանը հակազդելու, ապօրինաբար ձերբակալված անձանց անհապաղ ազատ չարձակելու, ազգային փոքրամասնությունների անվիճարկելի իրավունքները ռոտահարել շարունակելու պարագայում, իրավիճակի ապակայունացման ողջ պատասխանատվությունը կնկնի երկրի կենտրոնական իշխանությունների և Ջավախքում ծվարած վերջիններիս կամակատար անձանց վրա:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք
Ք. Ախալքալաք, 23.07.2008 թ.

Մեր համայնքի «Չորրորդ» իշխանությունը

Մամուլը ճանաչված է որպես որևէ համայնքի կամ երկրի «չորրորդ» իշխանություն: Այդ իշխանությունն օգնում է մյուս իշխանավորներին՝ գործադիր, օրենսդրական և դատական, որպեսզի բացահայտվեն նրանց թերությունները, ներկայացվեն առաջարկներ և կանխվեն չարաշահումները: Ինչքան համայնքը զարգացած է լինում, այնքան ավելի տեղ է տրվում «չորրորդ» իշխանությանը: Մենատիրական համայնքներում սահմանափակում են «չորրորդ» իշխանությանը և նրան մեծ վտանգ են համարում իրենց մենատիրության համար: Մեր երկրում այս երևույթը երկար տարիներ հատկապես շահի օրվանից առկա է եղել մեր համայնքում և Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո միայն, տարբեր ժամանակահատվածներում երբ առկա են եղել մամուլի տարբեր միջոցներ «չորրորդ» իշխանությունը կարողացել է իր դերն ինչ-որ չափով կատարել:

«Լույս» ամսագրի թիվ 142-ում լույս էր տեսել մի գրություն, որտեղ անդրադարձել էինք չարաշահումներին, որոնք կատարվում են հանգստարանում: Այս հոդվածի հասցեատերների մոտ բավականին հետաքրքրություն առաջացավ և այդ համարի ամսագիրն անմիջապես սպառվեց: Դժբախտաբար ազգային իշխանությունը մինչ այժմ որևէ ռեակցիա չի ցուցաբերել, չէ՞ որ նման դեպքերում հիմնականում նա պետք է անտարբեր չմնա. և եթե դա իրականություն է, ընդունի և չարաշահման դեմն առնի, իսկ եթե չի համապատասխանում իրականությանը՝ հակառակ փաստեր բերելով մերժի այն, գուցե կարելի է լռությունն ընդունել որպես համաձայնության նշան: Մեր նպատակն այդ հոդվածից ոչ թե վարկաբեկել կամ որևէ երևույթին անդրադառնալն, որը կարող է պատահել յուրաքանչյուր հավաքականում՝ անկախ նրանց գաղափարախոսությունից ու քաղաքական դիրքորոշումից:

Վերոհիշյալ օրինակով ուզում ենք կրկին մեր սիրելի համայնքի ազգային գործիչներին ու պաշտոնյաներին հիշեցնել, որ «չորրորդ» իշխանության գոյությունը և դերակատարությունը ոչ միայն չի թուլացնելու նրանց դիրքերը, այլ ընդհակառակը՝ օգնելու է բացահայտելու

որոշ թերություններ ու ներկայացնելու դրական առաջարկներ: Այս հասարակ հասկացողությունը կօգնի մեր համայնքի զարգացմանը, հույսով ենք մեր համայնքի անդամները և ղեկավարությունը՝ անկախ իրենց մոտեցումներից ու հայացքներից, ընթանումով կմոտենան այս երևույթին և իրենց մանուկում և կբաջալերեն նման մոտեցումները:

Մշակույթ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐԸ՝ ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Այսօր լրանում է մեր նշանավոր արձակագիր և թատերագիր Պերճ Զեյթունցյանի ծննդյան 70-ամյակը: Միրելի գրողը, որ նաև հրաշալի հրապարակագիր է (վկա՝ մեր և այլ թերթերում ստորագրած նրա բազմաթիվ հոդվածները), վերջին երկու տասնամյակներին հատկապես առավել մտերմացրեց իր հարաբերությունները թատրոնի հետ, և այժմ կարելի է ասել, որ մեր ժամանակներին բնորոշ պատճառներով նրա գործերն ավելի հանդիսատես ունեն քան ընթերցող: Ուստի թատրոնի ասպարեզում նրա վաստակի գնահատումը վատահեցինք մեր թերթի հավատարիմ հեղինակներից թատերագետ Վարսիկ Գրիգորյանին, որի հոդվածը լույս կտեսնի մեր վաղվա մշակութային հավելվածում: Մինչ այդ, մեր և ընթերցողների անունից ողջունում ու շնորհավորում ենք հոբելյարին ու մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ:



Թուրքիայի Նեվզեհիր համալսարանի գրականության ֆակուլտետում հայոց լեզվի և գրականության բաժին է բացվել

ԱՆԿԱՐԱ, 9 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Թուրքիայի միջհամալսարանական խորհուրդը վավերացրել է Նեվզեհիր համալսարանի գրականության ֆակուլտետում հայոց, եբրայերեն, հունաց, արաբերեն լեզվի և գրականության բաժիններ բացելու առաջարկը: Թուրքական «Հուրիեթի» փոխանցմամբ, առաջին անգամ Թուրքիայում թույլատրվել է հայոց լեզուն և գրականությունը պաշտոնապես ուսուցանելու գործունեությունը:

Վերին աստիճանի կարեւոր զարգացում գնահատելով այդ իրողությունը, Նեվզեհիր համալսարանի գրականության ֆակուլտետի ղեկան Մեթին Յուլագուն հայտարարել է, որ «հայկական արխիվները կարդացող մարդիկ Թուրքիան չունի, այն պարզ պատճառով, որ հայերեն իմացող մասնագետ չունի»: «Նման որոշումով, Միջհամալսարանական խորհուրդը հաստատել է հայկական հարցի լուծման գործում իր նոր մոտեցումները: Խոսքը գնում է ամեն ինչ մերժելու փոխարեն, ակադեմիական և քաղաքական իմաստով հազեցած բանակցությունների և երկխոսության նոր մոտեցում յուրացնելու մասին: Վերջապես հասկացել են, որ արգելքներով և արգելելով ոչնչի չեն կարող հասնել», -ասել է նա: Նշելով, որ պատրաստվում են Հայկական հետազոտությունների ինստիտուտ էլ հիմնել, թուրք պրոֆեսորն ասել է, որ Հայոց լեզվի և գրականության բաժինը կծառայի նաև վերջին շրջանում ջերմ ընթացք սկսած Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորմանը:

Յուլագուն ասել է, որ հայերենի ուսուցման կարգ ապահովելու համար պետք է օգնություն խնդրեն Թուրքիայի Հայոց Պատրիարքարանից և հայկական համայնքից: «Բացի այդ, կարող է մասնագետ հրավիրվել նաև Հայաստանի համալսարաններից: Երեք տարի առաջ Հայաստան կատարած իմ այցին Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկանը խոստացել է, քաղաքականությունից դուրս, ամեն տեսակի համագործակցություն իրագործել՝ Թուրքիայի համալսարանների հետ, ընդհուպ, դասախոսներ և ուսանողներ փոխանակել», -ասել է պրոֆեսոր Մեթին Յուլագուն:

Արցախ

ՏԻՋՐԱՆԱԿԵՐՏԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԿԵՐԱԳԻՐ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Տիգրանակերտի պեղումներն սկսելու պահից ակնկալվում էր որ այդտեղ կհայտնաբերվեն հայերեն արձանագրություններ: Սպասումներն արդարացան. բառացիորեն օրերս արշավախմբի անդամները գտել են նման արձանագրություն: Գտածոն մի փոքրիկ սկավառակ է՝ մոտ 8 սմ տրամագծով, որը գտնվել է 5-6-րդ դարերում կառուցված եկեղեցու սալահատակի վրա, սրահի միջնամասում, հյուսիսային պատին կից: Դա նվիրատվական իր է, որի մի երեսին նկարված է շրջանակի մեջ առնված խաչ, ինչը, արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Համետ Պետրոսյանի խոսքով, շատ տարածված էր 5-6-րդ դարերում: Մյուս երեսին նկարված է մորթենու գլխարկով, բեղ-մորուքով տղամարդու դիմապատկեր և արձանագրություն՝ «ԵՍ ՎԱԶ ԾԱՌԱՅ ՏՆ ԱՅ», որը պետք է կարդալ՝ «ԵՍ ՎԱԶ [Է] ԾԱՌԱՅ Տ [ԵԱՌՆ] Ա [ՍՏՈՒԾՈՅ]» նախադասությունը:



Թե ով է եղել Վաչեն, առայժմ դժվար է ստույգ ասել: Արշավախմբի անդամները գտնում են, որ ամբողջ միջավայրը հաստատուն է Կաղանկատվացու այն տեղեկատվությունը, թե այստեղ կա հայեցի միջավայր: Տիգրանակերտի գտածոն փաստորեն Արցախի տարածքում հայտնաբերված ամենահին հայերեն արձանագրություններից մեկն է և լավագույն փաստարկը Խաչենագետի ներքնահովտի վաղ քրիստոնեական հայկական դիմագծի, որը պատմական մի շարք այլ սկզբնաղբյուրների տվյալներով ուրվագծվում էր նաև նախքան այս գյուղը:

Գտածոն հայտնաբերվել է բազիլիկ եկեղեցու տեղում: Այստեղ պեղումներ կատարելու գաղափարը հղացել է եկեղեցու մասին Մակար Բարխուդարյանցի հիշատակությունից: Առաջին հետազոտողներն էին կրաշաղախ մեծ գանգվածների առկայությունը, տաշած քարերի բավականին մեծ կուտակումները: Պեղումները փոքր մասշտաբով սկսվել են 2006 թվականին, բանի որ հիմնական աշխատանքները կենտրոնացված էին Տիգրանակերտի մեծ պարիսպները գտնելու վրա: Առաջին տարում բացվել են եկեղեցու հարավային պատի մի հատվածը, մուտքը և արքիդի մի հատվածը, որը հետազոտողներին մղել է ենթադրելու, որ գործ ունեն բազիլիկ մեծ եկեղեցու հետ: Հաջորդ տարում պեղումներն ավելի մեծ ծավալ են ընդգրկել՝ հնագետները բացել են արքիդի ամբողջ մասը, բենի ամբողջ հատվածը և հյուսիսային պատը՝ մոտ 10 մ երկարությամբ: Բացվել է նաև հյուսիսային մուտքը: Ինչպես վկայում են

հնագետները, դա այն հավաքագրուտ եկեղեցիներից է, որն ունի մուտք եւ հյուսիսային, եւ հարավային մասերում, թերեւս նաեւ՝ արեւմտյան մասում, որը հիմնական մուտքն է: Արդեն իսկ երկու մուտքերի առկայությունը վկայում է բազիլիկ եկեղեցու մասին: Ենթադրվում է, որ այն 6-րդ դարի եկեղեցի է եւ գործել է մինչեւ 9-րդ դարը, իսկ հետագայում՝ ասպատակությունների կամ երկրաշարժերի հետեւանքով դադարել է գործելուց:

Արշավախմբի անդամները հույս ունեն, որ այս տարի կավարտեն եկեղեցու պեղումները, կգտնեն նրա բոլոր պարամետրերը եւ ի ցույց կդնեն հայ ճարտարապետության լավագույն բազիլիկ մի տաճարի հատակագիծը:

«Սա ոչ թե Արցախի ծայրամասի մի եկեղեցի է, սա հայ քրիստոնեական ճարտարապետության անկյունաքարերից մեկն է: Այդպիսի մեծ եկեղեցի մենք թիչ ունենք: Ես համոզված եմ, որ որոշ ոճեր ամբողջ Հայաստանում են դեպի հյուսիս այստեղից են տարածվել: Սա եղել է մի յուրովի քաղաքակրթության կենտրոն, որի թեկորներն ենք մենք տեսնում»,- ասում է Համլետ Պետրոսյանը:

Պեղումների շուրջ երկու տարի, եւ արդեն ուրվագծվում են երբեմնի հզոր քաղաքի ավերակները: Վանքասարի ստորոտից մի քանի հարյուր մետր բարձրության վրա չափազարկան աշխատանքներ է իրականացնում ԵՊՃԸ համալսարանի դոցենտ, ճարտարապետության թեկնածու Լյուբա Կիրակոսյանը՝ փորձելով ստեղծել Տիգրանակերտի վիրտուալ պատկերը:

Եռամաս, եռանկյունաձեւ քաղաքի վերեւի հատվածում դոյակներն են եղել, այնուհետեւ գալիս էր կենտրոնական թաղամասը, իսկ ներքեւում ամրացված թաղամասն էր: Լ. Կիրակոսյանի մատուցմամբ՝ մասշտաբով եւ շինարարական արվեստով սա եզակի հուշարձան է Անդրկովկասում:

Անցած շաբաթներին կատարված պեղումների գյուղը կարելի է համարել նաեւ միջնաբերդում բացված 8մ տրամագծով աշտարակը: Աշխատանքներն իրականացնող խմբի ղեկավար, Արցախի պետհամալսարանի դասախոս Վարդգես Սաֆարյանի տեղեկատվությամբ՝ խուսքն այս տարի պեղումներն սկսել է Միջնաբերդի երեք հատվածում: Ամենահետաքրքրական տեղերից մեկն արեւելյան պատն է, որտեղ բացվել է շրջանաձեւ մի աշտարակ: Ակնկալվում է, որ այս հատվածում կհայտնաբերվի հունարեն արձանագրություն: Արդեն բավականին նյութ է գտնվել. տարբեր տեսակի խեցեթեկորներ, որոնք վերաբերում են ինչպես միջնադարին, այնպես էլ հելլենիստական շրջանին:

«Տիգրանակերտը մեռած մի քաղաք չէ, եւ մեր խնդիրը միայն հողը հետ տանելով քարերը գտնելը չէ: Տիգրանակերտը մի գաղափարաբանություն է, որ մեզ պիտի ավելի իմաստուն ու հեռատես դարձնի»,- լրագրողների հետ զրույցում ասաց արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանը: Նրա համոզմամբ՝ Տիգրան Մեծը քաղաքն այստեղ կառուցելով հաշվի է առել նրա բնական պաշարներն ու ճանապարհները, գիտակցելով, որ եթե այդտեղ ամրոց կառուցի, իր ձեռքում կպահի մինչեւ Քուռն ընկած տարածքները: Այսպիսի ռազմավարությունն, անշուշտ, ուշադրության արժանի պարունակներ ունի:

ԿԻՄ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ, Ստեփանակերտ

«ՈՍԿԵ ԺԻՐԱՆ» ԿԻՆՈՓԱՆԱՏՈՒՑ ԻՐՑԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ «ՋՐԱՆԱՐՍԻ» ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

«Ոսկե ծիրան» կինոփառատոնի ընթացքում բարձրակարգ ֆիլմերի ցուցադրությունն ու համաշխարհային կինոգործիչների հետ համոզիպուսների շնորհիվ երեսանց ավելի քան յոթ օր դարձել էր մշակութային խաչմերուկների հանգրվան՝ հաղորդակցվելով վեհին ու նորովի ընկալելով պարզ ճշմարտությունները: Ֆրանսուի Կատրին Բրեյան հայ հանդիսատեսին ներկայացրեց գեղեցիկի, գրավիչի ու կանացիության սահմանագիծը, սերը ռեժիսոր Գորան Պասկալեիչի խորհուրդն էլ հետեւյալն էր՝ «Երբեք չդավաճանել սկզբունքներն ու ֆիլմերում մարդկային զգացմունքներ արտացոլել»: Հուլիսի 19-ին կայացավ «Ոսկե ծիրան»

կինոփառատոնի փակման արարողությունը, որտեղ Հայաստանի ու արտ-երկրի կինոաշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ մրցանակների հանձնումը: Խաղարկային ֆիլմերի մրցույթում գլխավոր մրցանակը շնորհվեց Աննա Մելիքյանի «Ջրահարս» ֆիլմին: Հերոսուհին՝ Ալիսան, ապրում է ծովեզրին: Նա կյանքը հանձնել է բախտի քմահաճույթին եւ երբեք չի պայքարում, այլ հարմարվում է փոփոխվող պայմաններին ու պատմական անցուղարձին: Ալիսան օժտված է ցանկություններն իրականացնելու ընդունակությամբ: Մոսկվայում նա հանդիպում է անծանոթի եւ տեսնում նրա կրծքին կախված խաչի մակագրությունը՝ «Պահիր ու պահպանիր»: Ինչն էլ ընդմիջտ փոխում է նրա կյանքը:

Հատուկ «Արծաթե ծիրան» մրցանակի արժանացան թալանդի ռեժիսոր Ադիտյա Ասարաթի «Հրաշալի քաղաքը» եւ Իսրայելից Էրան Ռիկլիսի «Կիտրոնի ծառը» ֆիլմերը: Վավերագրական մրցույթում ներկայացված ստեղծագործությունների որոշակի մասը նվիրված էր բռնության ու կանցած իրավունքներին: Մեյրա Աշերի «Կանայք շատ բան են տեսնում» ֆիլմը, որ արժանացավ գլխավոր մրցանակին, բռնության, ուժի եւ իրավունքների ոտնահարման մասին է, խնդիր, որ արդիական է յուրաքանչյուր երկրում: «Այն ընդլայնում է վավերագրական ֆիլմի մասին պատկերացումներն ու սահմանները՝ ժապավենը ապստամբների դեմ պայքարող կանանց մասին է: Ժյուրիին ապշեցրեց հատկապես այն տեսարանը, որտեղ ապստամբներից մեկը վերցնում է մագործի դանակն ու ասում, թե հաճույքով կնորթեր հղի կնոջ կամ երեխայի», ասաց վավերագրական ժյուրիի անդամ Կառլա Կարապետյանը: «Արծաթե ծիրանի» արժանացած հնդկուհի Նիշտա Ջաինի «Լաքշմին ու ես» ֆիլմն էլ պատմում է երիտասարդ կնոջ մասին, որ առանց հանգստանալու օրական ավելի քան 12 ժամ աշխատում է ու անընդհատ հանդիպում դժվարությունների ու բռնության:

Հայկական համայնապատկեր մրցույթում գլխավոր մրցանակի արժանացավ Էրիկ Նազարյանի «Կապույտ ժամը» ֆիլմը: Իսկ Դիանա Մկրտչյանի «Գաթա» եւ Մարիամ Օհանյանի «Ջրառատ մանրապատումները»՝ «Արծաթե ծիրանի»: Թուրք ռեժիսոր Հուսեյն Կարաբեյի «Իմ Մարլոնն ու Բրանդոն» ֆիլմն էլ արժանացավ Ֆիպրեսի ժյուրիի մրցանակին ու Էկունեմիկ ժյուրիի դիպլոմի: Բացի նախատեսված հիմնական մրցանակներից, փառատոնի կազմակերպիչները պատրաստել էին նաեւ հատուկ մրցանակներ հյուրերի համար: «Արվեստում եւ կյանքում խիզախության համար» մրցանակը շնորհվեց Կատրին Բրեյային: Իսկ կինոյում մեծագույն վաստակի համար «Փարաշյունայան թալեր» մրցանակը հանձնվեց գերմանացի ռեժիսոր Վիմ Վենդերսին ու պարսիկ կինոգործիչ Դարյուշ Մեհրջուիին:

«Փառատոնը հաղթանակով պսակվեց, եւ իր հինգերորդ տարեդարձը մշեց լեփ-լեցուն դալիժներում, ժապավենի բարձր որակով: Շատ կարեւոր էր հատկապես երիտասարդ ռեժիսորների համար նախատեսված միջոցառումները: Ապացուցեցինք, որ եթե լինի կամք, հնարամտություն ու ստեղծագործական մոտեցում, հնարավոր է բարձր մակարդակի միջոցառումներ կազմակերպել: Համոզված եմ, որ այս փառատոնը մշակակալի երեւոյթ կդառնա ոչ միայն տարածաշրջանի մշակութային խաչմերուկում, այլեւ իր աճին զուգընթաց կարելուրագույն տեղ կզբաղեցնի միջազգային կտրվածքով: Կինոգործիչներին ու արտասահմանցի հյուրերին բազմիցս հարցրել եմ, թե ինչ կարծիք ունեն փառատոնի մասին եւ նրանցից շատերը «Ոսկե ծիրանը» նմանցնում են Կաննի փառատոնին: Ձարգանալուն հանընթաց պետք է գիտակցենք, թե ինչն է այս փառատոնը դարձնում եզակի ու յուրահատուկ», ասաց կանադահայ կինոռեժիսոր, փառատոնի ժյուրիի նախագահ Ատոմ Էգոյանը՝ մրցանակաբաշխությունից հետո «Երեւան» հյուրանցում կայացած հանդիպման ժամանակ:

«Ոսկե ծիրան» կինոփառատոնի նախագահ Հարություն Խաչատրյանն էլ կատարված աշխատանքից գոհ է, սակայն նկատում է թերություններ, որոնք խոստանում է հաջորդ տարի շտկել: «Փառատոնի թերություններից էր կինոդալիժների սակավաթիվը լինելը, ժապավենների, DVD-ների ու

սարքավորումների անորակությունը, ինչը չէր համապատասխանում միջազգային ստանդարտներին: Շատ արագ էինք պատրաստել տողատակերը, որտեղ առկա էին բազմաթիվ թերություններ»: Հարություն Խաչատրյանը հավելում է, որ արդեն պատրաստվում են «Ոսկե ծիրան» միջազգային վեցերորդ կինոփառատոնին, որը «նոր հորիզոններ կբացի հայ կինոնատոգրաֆի զարգացման գործուն»:

«Ոսկե ծիրան» հինգերորդ միջազգային կինոփառատոնն արդեն պատմություն է: Այն աչքի ընկավ նշանավոր կինոգործիչների հետ հանդիպումներով, իսկ վարպետության անվճար դասերը հայ երիտասարդ ռեժիսորների համար բացեցին ֆիլմարվեստի գաղտնիքներն ու նրբությունները, ծիրանի բույրն էլ տարածվեց ամբողջ աշխարհում՝ ազդարարելով հայկական մշակույթի, հյուրասիրության ու բազմադարյան արվեստի մասին:

Մարզանք

Հայաստանի մարզիկներն օլիմպիական խաղերում ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՉԵՄՊԻՈՆՆԸ



1952, Հելսինկի, 15-րդ ամառային օլիմպիադա

Օգոստոսի 8-ին Պեկինում կտրվի այս տարվա մարզական ամենախոշոր իրադարձության 29-րդ ամառային օլիմպիական խաղերի մեկնարկը, որոնց կմասնակցեն Հայաստանի 25 մարզիկներ: Սեր հանրապետությունը մշտապես իր ներկայացուցիչներն է ունեցել օլիմպիադաների մասնակից խմբերում: Երկրորդ շատերը հաջող մրցելույթներ են ունեցել դառնալով օլիմպիական չեմպիոններ ու մրցանակակիրներ՝ ոսկե տառերով իրենց անունը գրելով հայկական սպորտի տարեգրությունում: Չառնից չէ, որ խորհրդային տարիներին «փոքր ազգերի» ներկայացուցիչների համար չափազանց դժվար էր երկրի տարբեր մարզածեղերի հավաքականներում ընդգրկվելը: Հարկավոր էր «մի քանի զլխով» բարձր լինել մյուս թեկնածուներից, այլապես, մախապատվությունը տրվում էր «մեծ ազգի» ներկայացուցիչներին: Այս հանգամանքն ավելի է արժեւորում օլիմպիադաներում հայ մարզիկների նվաճումները, ընդգծում նրանց բարձր վարպետությունը:

1996-ից մեր մարզիկներն արդեն անկախ Հայաստանն են ներկայացնում օլիմպիական խաղերում՝ ձգտելով օտար ափերում հնչեցնելու հայկական պետության օրհներգն ու բարձրացնելու եռագույնը: «Ազգը» սկսում է օլիմպիադաներում Հայաստանի մարզիկների ելույթներին նվիրված հոդվածաշարը:

1952-ի հելսինկյան օլիմպիադան առաջինն էր խորհրդային մարզիկների համար: 1951-ի ապրիլին խՍՀՄ-ում հիմնվեց ազգային օլիմպիական կոմիտե, որը նույն տարում դարձավ

ՍՕԿ-ի անդամ: Հուլիսի 19-ին մեկնարկած օլիմպիական խաղերում խՍՀՄ հավաքականում ընդգրկված 381 մարզիկների թվում էին նաև Հայաստանի պավիոններ, մարմնամարզիկ Հրանտ Շահինյանն ու հնգամարտիկ Իգոր Նովիկովը:

Այն տարիներին սպորտային մարմնամարզությունում առաջատար դիրքեր էին զբաղեցնում Գերմանիայի, Շվեյցարիայի եւ Չեխոսլովակիայի մարմնամարզիկները: Սակայն խՍՀՄ հավաքականը գերազանցեց բոլորին՝ հաճելի անակնկալ մատուցելով իր երկրպագուներին: Եվ այդ հաջողությունում իր արժանի ավանդը ներդրեց նաև Հրանտ Շահինյանը, որը չնայած վնասվածքին (մարզումների ժամանակ վնասել էր գոտկատեղը), գերազանց ելույթ ունեցավ:

Բազմամարտում հենց առաջին վարժությունից չեմպիոնի կոչման համար հիմնական պայքարն ընթացավ Հրանտ Շահինյանի եւ նրա թիմակից Չուկարինի միջև: Երեք տարի առաջ Բուդապեշտում կայացած համաշխարհային ուսանողական խաղերում հանրահայտ երկու մարմնամարզիկների մրցավեճն ավարտվել էր հայ մարզիկի անվիճելի առավելությամբ՝ Շահինյանին պարզելով վեց ոսկե մեդալ: Համառոտ մրցապայքարում փկտոր Չուկարինին հաջողվեց ընդամենը 0,2 բալով գերազանցել Շահինյանին ու արժանանալ ոսկե մեդալի: Հայ մարզիկը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով:

Առանձին գործիքների վրա վարժություններից ամենափայլունը օղակների վրա Շահինյանի ելույթն էր: Առանձնակի փայլով Շահինյանի կատարած դժվարագույն տարրերով վարժությունը հանդիսականների բուռն ծափահարություններին արժանացավ: Հիացած էին նաև խստապահանջ մրցավարները՝ ելույթը գնահատելով 9,95 բալով՝ ինչը Շահինյանին օլիմպիական առաջին ոսկե մեդալը պարգևեց: Նա հաղթանակին մոտ էր նաև մծուկաթափերում, սակայն կամավոր ծրագրից հետո մի փոքր զիջեց դիրքերն ու դարձավ արծաթե մեդալակիր: Սեկ ոսկե մեդալ էլ Շահինյանը շահեց թիմային հաղթանակի համար: Այսպիսով, Հրանտ Շահինյանը դարձավ ժամանակակից օլիմպիական խաղերի առաջին հայ չեմպիոնը:

Այս հաջողությունը բնավ էլ պատահական չէր: Հրանտ Շահինյանը երկրում ճանաչված մարմնամարզիկ էր, միջազգային մի շարք մրցումների հաղթող ու մրցանակակիր էր, տարբեր վարժությունների խՍՀՄ չեմպիոն: Իսկ մինչ օլիմպիադան, 1952-ին նա նվաճել էր նաև խՍՀՄ բացարձակ չեմպիոնի տիտղոսը: Մարմնամարզությունում հասած ակնառու հաջողությունների համար 1951-ին Հրանտ Շահինյանին շնորհվել էր սպորտի վաստակավոր վարպետի կոչում: Եվ օլիմպիադայում ունեցած հաջողությունը կրկնապատկեց անվանի մարմնամարզիկի փառքը:

Բացի մեծ մարզիկ լինելուց, Հրանտ Շահինյանը նաև հրաշալի մարդ՝ խորապես հայրենասեր, սիրող ամուսին, ուշադիր եւ հոգատար ընկեր էր: Նա ամեն տեղ, բոլոր պայմաններում իրեն պահել է համեստ, արժանապատիվ, խիստ բարեկիրթ: Հ. Շահինյանը եղել է նաև հրաշալի մանկավարժ, Երևանի մարմնամարզության դպրոցի հիմնադիր տնօրեն: Այդ դպրոցն այսօր, Հ. Շահինյանի վաղաժամ մահվանից հետո, արժանավորապես կրում է հիմնադրի անունը:

Ցավակցական

Խորը վշտով համակված ցավակցություն ենք հայտնում էլիզ, Անդրուհի եւ Ալեք Խոսրովյաններին ու հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի

Վարդուհի Խոսրովյանի

ցավալի մահվան առիթով:

Թամար եւ Եղիկ Բաղդասարյաններ